ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

Հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի ապրիլի 29-ին:
Նիստին մասնակցել են հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
2. Նախորդ նիստի որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում
3. ԱՈՒՊ-ների ամփոփման շուրջ իրականացվող աշխատանքներ (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
4. Տարեկան 200 ժամ և ավելի բացակայություն ունեցող սովորողների լրացուցիչ քննություններ հանձնելու գործընթաց (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
5. Վերջին դասի պլանավորում (զեկուցող՝ մասնախմբի անդամ Բ. Խուբլարյան)

Լսեցին՝

1. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց ապրիլի 29-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 5 հարցից:

Լսեցին՝

2. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ նախորդ նիստի որոշումները կատարվել են. առցանց ծնողական ժողովի ժամանակ ներկայացվել են սովորողների առաջադիմության արդյունքները՝ ըստ ԱՈՒՊ-ի, նշվել է դպրոց-ծնող համագործակցության կարևորությունը և անհրաժեշտությունը՝ սովորողների առաջադիմության ուղղությամբ տարվող աշխատանքներում: Ամփոփվեց Մեծ Եղեռնին նվիրված միջոցառման արդյունքները: Նշվեց, որ միջոցառումն անցել է կազմակերպված և նպատակային՝ ապահովելով սովորողների ակտիվ մասնակցությունը: Նույն համատեքստում իրականացվել է էքսկուրսիա դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր (7-րդ և 9-րդ դասարաններ)՝ ուսումնական և դաստիրակչական նպատակներով:

Լսեցին՝

3. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը առաջարկեց ուսումնական տարվա ավարտին և ԱՈՒՊ-ների ամփոփմանն ընդառաջ իրականացնել սովորողների ԱՈՒՊ-ների վերլուծություն՝ անդրադառնալով արձանագրված ձեռքբերումներին և առկա բացթողումներին, ինչպես նաև նախապես սահմանված նպատակների իրականացման աստիճանին՝ ապահովելով պատրաստվածություն ԱՈՒՊ-ների տարեվերջյան ամփոփման գործընթացին:

Լսեցին՝

4. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը նշեց, որ մասնախմբի այն անդամները, որոնք միաժամանակ հանդիսանում են նաև դասղեկներ, պետք է հետևողականություն ցուցաբերեն սովորողների բացակայությունների հաշվառման նկատմամբ՝

պարբերաբար ամփոփելով առկա բացակաների քանակը մինչև ուսումնական տարվա ավարտը, նպատակ ունենալով պարզել 200 ժամը գերազանցող սովորողների առկայությունը, ովքեր ենթակա են լրացուցիչ գրավոր քննությունների: Բացի այդ Հ. Փիրումյանը նշեց, որ բոլոր դասարանների լրացուցիչ քննական գրավոր աշխատանքների առաջադրանքները մշակվում են Հաստատության մեթոդական միավորումների կողմից առնվազն 3 տարբերակով:

Լսեցին՝

5. Հումանիտար առարկաների մասնախմբի անդամ Բ. Խուբլարյանը, որը 9-րդ դասարանի դասղեկն է, ներկայացրեց վերջին դասի անցկացման պլանը: Քննարկվեց ձևաչափը, բովանդակությունը և կազմակերպչական հարցերը: Առաջարկվեց միջոցառումը կազմակերպել հանդիսավոր մթնոլորտում՝ ներգրավելով 9-րդ դասարանի բոլոր սովորողներին և տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչներին:

Որոշում է

1. Հաստատել հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի 2026 թվականի ապրիլի 29-ի նիստի օրակարգը:
2. Ի գիտություն ընդունել հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանի կողմից նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը՝ արձանագրելով, որ առցանց ծնողական ժողովների ընթացքում ներկայացվել են սովորողների առաջադիմության արդյունքները՝ ըստ ԱՈՒՊ-ների և ընդգծվել է դպրոց-ծնող համագործակցության կարևորությունը: Նշվեց նաև, որ կազմակերպվել և իրականացվել են Մեծ Եղեռնին նվիրված միջոցառումը և ուսումնական նպատակով այց դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:
3. Ուսումնական տարվա ավարտին և ԱՈՒՊ-ների ամփոփմանն ընդառաջ իրականացնել սովորողների ԱՈՒՊ-ների վերլուծություն՝ անդրադառնալով արձանագրված ձեռքբերումներին, առկա բացթողումներին և նախապես սահմանված նպատակների իրականացման աստիճանին:
4. Դասղեկներին հանձնարարել մինչև ուսումնական տարվա ավարտը շարունակաբար վերահսկել սովորողների բացակայությունների հաշվառումը՝ ժամանակին առանձնացնելով 200 ժամը գերազանցելու ռիսկ ունեցող սովորողներին:
5. Հաստատել 9-րդ դասարանի «Վերջին դաս» միջոցառման կազմակերպման ընդհանուր ձևաչափը՝ ապահովելով սովորողների և դասարանում դասավանդող ուսուցիչների ակտիվ ներգրավվածությունը:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ **Հ. Փիրումյան**

Քարտուղար՝ **Ա. Օհանյան**

06.05.2026